



ՅՏԻՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՄԱՅԻՆԱԿ ԱՐԱՄԵԱՆԳԻ

(ԳՐԱԳՈՐԾՆ ԵՂԻԴԱՏՆՏԵՍԻԻ)

A
T
13898




ԱՐՄԵՆ ԳՐԱԳՐ

ՄԵՐ ԱՊԱԳԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

ԷՏՄՕՆ ՏԷՄՕԼԷՆԻ


«ՆՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ»




1913

Տպարան ԿՈՂՄԱԿԻ, Կ. Պոլիս

Պապ Ե Այի, Կարգապետի շրջան, քիւ_27





Տպարան «ԿՈՂԱԿ»ի

Կ. ՊՈԼԻՍ, ՓՈՍԴԱՐԿՆ ԹԻՒ 125

ՆՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐԸ



Երկրի մը բարգաւաճումը կախուած է անոր արդիւնաբերող ոյժերու զարգացման աստիճաններէն: Եւրոպայի զարգացումը հետեւանք է անոր ճարտարարուեստի և գիւղատնտեսութեան ընդարձակման: Թիւրքիոյ յետադիմութիւնը արդիւնք է ճանրաներու անկանոնութեան, երկրագործութեան անտեսումին և արհեստներու քայքայման:

Ընդունելով երկրի մը բարգաւաճման ազդակը անտեսութիւնը, հոս պէտք է շեշտեմ որ անտեսութեան, այսինքն մարդկային արտադրողական ոյժերու ամէնէն կարեւոր տարրերէն է մարդկային ոյժը:

Ճարտարարուեստի և երկրագործութեան հետ մարդկային մտաւոր և ֆիզիքական ոյժի մասնակցութեամբ է որ յառաջ կուգայ փարթեամ անտեսա-ճասարակակազմը:

Երբ նկատի ունենանք մարդ անհատի յոյժ կարեւորութիւնը այդ գործին մէջ և երբ միեւնոյն ատեն նպատակ դրնենք երջանկացնել երկիրը, անկասկած մեր առաջին գործերէն մէկը պիտի ըլլայ կրթել, դաստիարակել մարդ անհատի ոյժն ու ընդունակութիւնը: Ահա այս տեսակէտէն՝ քաղաքակրթութեան մէջ խիստ կարեւոր դեր ունին դպրոցները, որոնք կրնան զգալապէս փոխազդել երկրի անտեսական ոյժերու զարգացմանը վրայ:

Ինչէ զաստիարակութեան նպատակը:

Մեր վերոյիշեալ մտքերէն կարելի է հասկնալ որ կրթութեան նպատակն է զարգացնել մարդու ընդունակութիւնները մէկ կողմէն կեանքի բարգաւաճման, և միւս կողմէն՝ անհատի գոյութեան կռուի զէնքերը զօրեղացնելու համար: Ուրիշ խօսքով, զաստիարակութիւնը պէտք է պատրաստէ անհատներ, որոնք օգտակար դառնան թէ հասա-

բակուբեան և թէ իրենց : Կրթութեան նպատակը պիտի ըլլայ «կեանքի մարդ» պատրաստել :

Առ հասարակ քաղաքակիրթ երկիրներու դպրոցները երկու թիփի են . Ա . ընդհանուր զարգացում տուող , Բ . մասնագիտական կրթութիւն տուող : Երկրորդական դպրոցները կուտան ընդհանուր զարգացում , որով անհատը կը հասկնայ տեղեւորական , ընկերային և չոգեկան երեւոյթները , ասոնց ըմբռնած ըլլալովը , նա գիտակից անդամ կը դառնայ նոյն հասարակութեան : Իսկ մասնագիտականը՝ պարունակելով առաջինի նպատակը , պաշտօն ևս կուտայ անհատին , որով նա իր ապրուստի միջոցները կը հայթայթէ :

Վերադառնանք մեզ . երկրորդ թիփի դպրոցներ համարեա՛ թէ չունինք , իսկ առաջինէն՝ շատ : Եթէ ըսեմ թէ տաճկաստանի մէջ ոչմէկ ազգ մեզի չափ երկրորդական դպրոց ունի , սխալուած չեմ ըլլար : Բաւական է թղթի վրայ թարգմանել եւրոպական համանման դպրոցի մը ծրագիրը և կառավարութենէն վաւերացնել . . . երկրորդական դպրոցները պատրաստ են :

Չը գիտեմ ուրիշները ինչ կարծիք ունին , ես կըսեմ թէ որքան երկրորդական դպրոց ունինք , այնքան ալ անհատակործան օճախներ ունինք : Մեր ներկայ միջնակարգ դպրոցները ծաղիկ խամբեցնող բոյներ են : Գիւղերու և լեռներու վրայ ազատ և անարատ աճող մատաղ մանուկները կուդանայք մանկասպանարանները ու խեղաթիւբուած , այլանդակուած ետ կը դառնան :

Մենք կըսենք որ դաստիարակութեան նպատակն է մարդ անհատի ոյժն ու ընդունակութիւնները զարգացնել : Հետեւաբար , մենք իրաւունք ունինք երկրորդական դպրոցներէն նոյն բանը պահանջելու : Այդ դպրոցները քանի՞ միջոց ունին դաստիարակութեան իրական նպատակին հասնելու համար , մենք երկու գլխաւոր միջոցներ գիտենք , Ա . — դասաւանդման մեթոտ . Բ . — մարմնակրթական մարզանքներ :

Այս երկու միջոցներով դպրոցը կը հասնի իր երեք նպատակներուն՝ ֆիզիքական, բարոյական և մտաւոր կրթութեան :

Բարեբաղդութիւնը թէ՛ դժբաղդութիւնը ունեցայ այս տարի այցելելու մեր Պոլսոյ և շրջակայ դպրոցները՝ ինչ դրութեան մէջ գտայ դասաւանդութեան մեթոտը և մարմնակրթական միջոցները :

Ասոր պատասխանը դիւրաւ կը ստանանք երբ ըսեմ թէ ես համարեա՛ թէ ոչ մէկ տեղ իսկական ուսուցիչ տեսայ Անոնք ուսուցիչ դարձած են ոչ թէ սիրելով զայն՝ նպատակի մը հասնելու համար, այլ ուրիշ գործերու մէջ յաջողութիւն չգտնելու պատճառաւ : Անոնք չը գիտեն որ դասաւանդութեան մեթոտը այնպիսի արհեստ մըն է որ պէտք է ուսանիլ, որ կան զանազան մեթոտներ՝ հին և նոր մեթոտներ : Նոր մեթոտներու առաւելութիւնը այն է որ աւելի դիւրին և ազէկ կը սորվեցնէ դասը : Աշակերտը եռանդուն և ուշիմ, իսկ ուսուցիչն ալ միշտ հաճոյքի մէջ կը պահէ :

Մարմնակրթութեան օգուանները իւրացուցուած չեն : Մեր մէջ մարմնամարզութիւնը միայն՝ մարմնի կրքուրեան համար միջոց կը հասկցուի : Դպրոցները ընդհանուր նպատակ չունենալուն համար այդ դասերն ալ քատասային վիճակի մէջ կը գտնուին : Որպէսզի մենք ցոյց տանք թէ մարմնական մարզանքները ինչ ուղղութիւն պէտք է ստանան, մենք նախ մատնանշելու ենք պարագայ մը :

Ինչպէս վերն ալ ըսի, դպրոցները նպատակ պէտք է ունենան : Մեր նախակրթարանները և երկրորդական դպրոցներու զեկաւարները ազէկ գիտնալու են որ դպրոցի նպատակն է կեանքի մարդ պատրաստելը, երկրորդական և եւախակրթարանի աշակերտ մը, դպրոցը աւարտելէն ետքը, բացարձակապէս չ'օգտուի իր ուսումէն :

Դպրոցի դասերը իրօք չեն նպատակ իրեն գոյութեան կուուի մէջ : Երկրորդական դպրոցի շրջանաւարտի մը ձեռքը ասեղ մը տուէք, կրնա՞յ իր տափաթի կոճակը կարել, երբէք :

կամ դերձակին, կամ մայրիկին կարել պիտի տայ, Արհեստաւորի զաւակ շրջանաւարտի ձեռքը տուէք մուրճ մը, դանակ մը, կօշկակար հօր եմէնիներու քիթը պատռելէ զատ ոչ մէկ բան կրնայ ընել, Երկրագործին զաւկին տուէք բահն ու բրիչը, մէկ ժամուայ աշխատանքէն ետքը ամբողջ ընտանիքը անոր ձեռքերու վրայ առաջ եկած պողոճակները դարմանելով ժամավաճառ պիտի ըլլայ, անկէ օգուտ տեսնելու փոխարէն:

Անա եկաւ տեղը շեշտելու մարմնական կրթութեան դերը: Անմատթիւն է մեր հիմակուայ դպրոցներու մէջ տարածուած «Շուեռական մարմնամարզը», — «ձեռքերն վեր» «տաքերը յառաջ», բայց ինչո՞ւ: Աշակերտը հոս մեքենայ մըն է. աւելին կայ. ի զուր կը վատնուին անոր ոյժերը: Մարմնամարզը եւ դասերը պէտք է միացան իրարու հետ: Աշակերտը ձեռքերն վեր-վար տանելու է... հողի կոյտը քանդելով: Աշակերտը ձեռքը առաջ-յետ քաշելու է... սղոցով: Կրկնապատկեցէք այս աշխատանքը, այն ատեն դուք կունենաք դպրոցին բակին մէջ պէտքական փոսեր, խրճիթներ, կամ դպրոցին կարեւոր գործիքներ, ցիցեր, սնտուկներ, արձաններ, եւ այլն:

Մարմնամարզութեան դասեր ոչ միայն մօտաւոր, այլեւ հեռաւոր նպատակի համար ալ գործածելու է: Աշակերտը դպրոցէն շրջանաւարտ ելլելէն ետքը, ինչո՞ւ խեղճ ու կրակ քաղաքներու մէջ թափառի, եթէ միջոց չունի համալսարան երթալու: Երկրորդական և նոյն իսկ միջնակարգ դպրոցներու մէջ տուէք անոր արեւատ սորվելու ճամբայ մը, երկրագործութիւն ընելու ընդունակութիւն մը:

Մանաւանդ մեր զաւառական դպրոցները կրնան փառաւորապէս գիւլպատնետական մասեր ունենալ: Անոնք ունին ընդարձակ հողեր, թող բերուին հոն երկու այժ, չորս հաւ, փեթակ, երկու կաթի մեքենայ, 10 հաա բոժոժ եւ այլն. ասոնք նախաւոր են ճարպիկ եւ տեղեակ ուսուցչի համար:

Աշակերտները, եթէ ունին ընդարձակ դպրոցական բակեր՝ հոն, իսկ եթէ չկան՝ մօտիկ ազատ հողերու վրայ թող քանդեն:

աղոցեն, կտրեն, կապեն, այրեն, տարրալուծեն, միացնեն, չրջանակ քաշեն, չափեն, հաշուեն, կենդանիները բեռցնեն, իրենք շաղկած կրեն, հերկեն, կալլեն, բոյսեր անկեն, ջրեն, և այլն ևւայլն, ահա խելացի ուսուցչի մը բնական գիտութիւններու, թուարանութեան, Երկրաշափութեան, լեզուի, մարմնամարզութեան ևւայլնի դասագիրքերը:

Փամանակն հասերէ մեր մատաղ սերունդն ազատելու ներկայ խճողուած և անմարսելի դասագիրքերէն: Մեր հիմակուայ աշակերտութիւնը ուղղակի գերի է դասագրքին հեռացուցէք անոր ձեռքէն գիրքը. ոչինչ կը մնայ յիշողութեան մէջ: Գրքի մէջ գրածները չեն իւրացուցուիր, իրենց սեփականութիւնը չեն դառնար, թութակօրէն գոց կը սորվին:

Զէ՛ որ գրքի նիւթը բնական և մարդկային կեանքի երեւոյթներն ու անոնց բացատրութիւններն են: Հետեւաբար ուսուցիչները գրեհն աւելի կենդանի և իրական երեւոյթներու առաջ պէտքէ կանգնեցնեն մանուկը, և հոն խօսեցնել, դատել, քննել տան զայն որ ինքն ալ հոն բացատրէ և պատմէ:

Այս ձեւի գաստիարակութիւնը կրկնակի. եռակի օգուտներ կուտայ. նախ աշակերտը կսկսի չի զարմանալ բնական երեւոյթներու առջեւ. ան գիտակցաբար կը վերաբերի թէ բնական և թէ մարդկային կեանքի այս կամ պատահարի հետ:

Գաստիարակուած քաղաքացի աշակերտ մը ազատ կըլլայ սնամիտ յոխորտանքէն. մեր շալուարաւոր գիւղացին և մրտա բանւորը անոր աչքին ոչ թէ արհամարելի տարրեր կը մնան, այլ ստեղծագործող ոյժի աղբիւրներ, քաղաքակրթութեան սիւներ, աշխատանքի մարմնացումները:

Իսկ գիւղացիի, արհեստաւորի զաւակը անճարացած պանդխտութեան չի մղեր, այլ յոյսը իր բազուկներու ոյժի, մատներու շնորհքի և վերոյիշեալ դպրոցական դասերու վրայ դրուած կը կերտէ զէջքեանը, հողն ու փայտը ու կսկսի իր սեփական աշխատանքով ապրիլ:

Աշխատանքի պաշտամունքն է որ պիտի թագաւորէ :

Այս ձեւի դաստիարակութիւնը մտաւոր և բարոյական կրթութեան ալ մեծ օժանդակ կը դառնայ :

Մեր ցոյց տուած դպրոցական մարմնական մարզանքը կրնա՞յ թողուլ որ և է անբարոյութեան միջբոյժ մը, անտրամաբան միտք մը : Առողջ հոգին առողջ մարմնի մէջ : Կաւելցնեմ նաև, առողջ բարոյականութիւնն ալ առողջ մարմնի և առողջ մտքի մէջ :

Ինչպէս չի զարգանար այս եզանակոյ կրթուած հայ գիւղացիի մանուկին միտքը, երբ անոր ամեն գործը կարօտ է ուղիղ դասնելուն ուղիղ շափելուն, ուղիղ կշռելուն :

Ինչպէս չը զարգանայ անոր բարոյականութիւնը, երբ այսքան աշխատանքը՝ տարբեր ուղղութեամբ վառնած է ջղերու աւելորդ ոյժը, որով ժամանակ և առիթ չէ տուած օնանականութեամբ պարագելու եւ կամ ուրիշ նման պատկերացում ունենալու :

Ինչպէս վիրաւորէ իր ընկերը, երբ միշտ պէտք ունի անոր՝ սղոցելու կամ ցանկելու գործին մէջ : Ինչպէս խաբէ թէ « ծագիկները ջրած են » երբ վաղը անոնք կը չորնան ու ետքը հրապարակաւ կը խայտառակուի : Ինչպէս գողնայ մատիար, երբ գիտէ որ անով իրեն ճաշասեղանի տախտակը կը գծուի եւ այլն :

Ահա գործնական միջոցներ որ կուտան թէ մտաւոր, թէ բարոյական և թէ ֆիզիքական դաստիարակութիւն :

Այս անորո թիփի դպրոցներու հայրենիքը Անգլիան է, մտքի և կրթքի լայն երկիրը :

Էտմօն Տէմօլէն, երկար ուսումնասիրութիւն մը գրած է այդ դպրոցներու մասին. ինքն ալ անոնցմէ օրինակ առնելով ֆրանսիոյ մէջ Ecole des Roches դպրոցին հիմքը գրած է : Օգտուելով անոր « Նոր դաստիարակութիւն » մեծ գրքէն՝ հոս թարգմանարար կը բերեմ մէկ փոքրիկ, բայց էական մասը դպրոցներու ծրագիրը և անոնց մեկնաբանութիւնը : Էտմօն Տէմօլէն այնքան գեղեցիկ զգացած և դիտած է որ մենք համարեա նոյնութեամբ պիտի բերենք հոս :

ԱՌԱՐԿԱՆԵՐՈՒ ԴԱՍԱԻԱՆԴՄԱՆ ՄԵԹՈՏՆԵՐԸ

Մրազրի կարեւոր մասը կը բռնեն կենդանի լեզուները . էտմոն Տէմուլէն նախ կը խօսի կենդանի լեզուներու դասաւանդութեան մասին . «Կենդանի լեզուներն ալ մայրենի լեզուի նման սովբելու է , այտինքն խօսելով : Քերականութիւնը յետոյ ցուցնելու է , այն ալ անհրաժեշտ մասերը միայն :

«Որքան մանկան հողին կը խորշի բառարանի գործածութենէն և քերականութեան չոր ու խրթին բացատրութենէն , այնքան նա ընդունակ է սովբիլ լեզուները գործնական կերպով :»

Պ. Տէմուլէն կը պնդէ որ օտար լեզուի ուսուցիչը միայն սովբեցնելիք լեզուն պէտք է գործածէ . սխալ է մայրենի լեզուով բացատրելը . ուսուցիչը նոր սովբող աշակերտին դիւրմբոնելի նիւթերու մասին պէտք է խօսի դիւրին բառերով : Աշակերտը միշտ խօսեցնել տալու է . ինչպէս որ ականջով սովբեցաւ իր մայրենի լեզուն , այնպէս ալ օտարինը սովբելու է :

Լեզուէն ետքը դասացուցակի¹ վրայ կը տեսնանք ւսեխարհագրութիւն ու պատմութիւնը , որոնց՝ լատիներէնի յետաձգման պատճառաւ աւելի ժամանակ կարելի է յատկացընել , քան մեր ներկայ դպրոցներու մէջ . բայց այդ երկու դասերը , տարբեր դասաւանդութեան մեթոտի պատճառաւ ալ կարեւորութիւն կ'ստանան :

Իմ տարեկիցներու սովբած աշխարհագրութիւնը միայն լեռներու , ջրի հոսանքներու , քաղաքներու և վարչական բաժանումներու , մէկ խօսքով , վերջիչելու քիչ շատ դժուար սահմանումներու չոր անուանացուցակ մըն էր , որ դաստիա-

(1) Դասացուցակը գրքին վերջն է :

բակչական ոչ մէկ արդիւնք տալէն զատ դժուարութեամբ կը մտնար յիշողութեան մէջ: Գովասանքի արժանի յառաջդիմութիւնները այս դարէն կ'ըսկսին. դժբաղդարար աշխարհադրութեան մէջ յառաջդիմութիւն երեւցաւ նոր, յատկապէս տնտեսական ծանօթութեան յաւելումով, ասիկա դասը՝ լուսարանելէ, կենդանացնելէ աւելի, զուտ աշխարհադրական երեւոյթներու և մարդկային հասարակութեան այլազան տարրերու սերտ յարաբերութիւնը ցոյց տալու համար էր:

Աշխարհագրութիւնը էապէս աշխարհագրական միջավայրի ուսումնասիրութիւնն է. բայց իւրաքանչիւր աշխարհագրական դիրքը անհրաժեշտօրէն և ուղղակիօրէն կ'ազդէ աշխատանքի ձեւերու, սեփականութեան, ընտանեկան և պետական կազմի և նոյնիսկ ցեղի վրայ, որու ընդունակութիւնները այս կամ այն ձեւով կերպարանափոխուած են այդ միջավայրէն(1):

Ընկերային գիտութիւնը կուգայ որոշելու այսօր այդ յարաբերութիւնները, և օրէցօր ճշգրելու զայն:

Բայց ներկայ աշխարհագրական միջավայրի ազդեցու-

(1) Ընդունելով աշխարհագրական գիրքի խոշոր կտրեւորութիւնը, այնու ամենայնիւ մենք համակարծիք չենք հեղինակին թէ ան շուրջակէս կ'ազդէ, օրինակ, ընտանեկան և պետական կազմի, ցեղի վրայ. եթէ այդպէս ըլլար նոյն աշխարհագրական պայմաններու մէջ ապրող ցեղերու ընդունակութիւնները չը պիտի փոխուէին, քանի որ աշխարհագրական դիրքը չի փոխուիր. այնքնչ մենք միտ ահանատես ենք՝ անփոփոխ աշխարհագրական դիրքի մէջ ապրող ցեղերը անարգել փոփոխութեան ենթարկուած են շնորհիւ սնեսական պայմաններու փոփոխման:

Մենք աշխարհագրական գիրքի անմիջական ազդեցութիւնը կընդունինք սնեսական կազմի վրայ, և անոր միջոցով ալ ցեղի, պետութեան, ընտանեքի վրայ: (Տե՛ս մանրամասն իմ Պատմական մատերիայի զմ' զըր-նյէր էջ 40):

թիւնը միակը չէ. նա աւելի կամ նուազ չափով եղանակաւորուած է ցեղի նախընթաց կազմակերպութեամբ, այսինքն իր պատմութեամբ: Յեղի մը անցեալ կազմակերպութիւնը կրնայ զայն աւելի կամ նուազ ընդունակ դարձնել պայքարիլ որոշ միջավայրի մը դժուարութիւններու դէմ և զայն ձեւափոխել: Ասիկա կուգայ ըսելու թէ մարդը ազդուած է կրկնապէս: Նախ և առաջ նա ազդուած է միջավայրի ներկայ պայմաններէն, ահաւասիկ աշխարհագրութիւնը, Երկրորդ՝ նա ազդուած է նոյնպէս միջավայրի կամ միջավայրերու նախընթաց պայմաններէն, զորս իր նախահայրերը ապրած — անցած են, ահա և պատմութիւնը:

Մարդկային ցեղի պէսպիսութիւնը միայն մէկ հիմնական ազդակ ունի, այն ալ միջավայրի պէսպիսութիւնն է, ուր իւրաքանչիւր ցեղ հարկադրուած է յեղաշրջուելու, թէ անցեալի և թէ ներկայի մէջ:

Իրար հետ սերտօրէն միացած աշխարհագրութիւնը և պատմութիւնը պէտք է այս պէսպիսութեան պատճառները բացատրեն, հետեւաբար մարդը և հասարակութիւնը և կամ ուրիշ խօսքով մարդոց մէջ ամէն տեսակէտով կազմուած զանազան խմբաւորումները պէտք է բացատրեն:

Ուրեմն, աշխարհագրութիւնն ու պատմութիւնը գերազանցապէս մարդու գիտութիւնը և հասարակութեան հիմքերը կը կազմեն, այսինքն հասարակագիտութիւնը:

Հոս այդ մասին երկար չպիտի խօսիմ, բայց միւսնոյն ատեն պարտաւոր եմ մանկավարժական տեսակէտով շատ կարեւոր նկատողութիւն մը աւելցնել: Ներկայ ուսուցման ամենամեծ տկարութիւններէն մէկը այն է, որ մարդկային ծանօթութեան մէկ մասը խառնաշփոթ կապով կապուած է միւս մասերուն հետ:

Հին ատենները բազմազան ծանօթութիւնները իրարու հետ սերտօրէն միացած էին. անոնք համախմբուած էին Փի-

լիստփայութեան շուրջը, որը ուսողութիւններն ալ կը պարունակէր :

Միջին դարուն մարդկային ծանօթութիւնները սերտորէն միացած էին իրար հետ : Անոնք համախմբուած էին Աստուածարանութեան շուրջը որ միանգամայն փիլիսոփայութիւնը և ուսողութիւնը կը պարունակէր :

Այս յարակցութեան շնորհիւ, մարդկային հոգին կը բնար, թէ և անկատար ու սխալ, սակայն կերպով մը իրար հետ յարմարող միաձոյլ ծանօթութիւններ ընդգրկել :

Բնական գիտութիւններու հանդէս գալովը, ուսուցման խիստ նեղ և հին շրջանակը ջախջախուեցաւ և հին կարգն ալ խանգարուեցաւ :

Ամեն մարդ գիտէ Յրանսուա Բաքոնի փորձերը, որ թէ և առանց յաջողելու — կուզէր առարկաները կարգաւորել և *instauratio magna* (Մեծ վերածնունդ) անուան տակ մարդոց ծանօթութիւնները վերյարդարել ու դասաբաշխել :

Նա չը յաջողեցաւ, որովհետև ոչ մէկ գիտութիւն այն ատեն, ըստ բաւականի, ընդհանուր և բովանդակող էր, որ կարողանար ուրիշ գիտութիւններու կեդրոն ու առանցքը դառնալ :

Ուսուցումը երթալով աւելի մանուածապատ դարձաւ և մանրացաւ. տարուէ տարի բազմացող և փոփոխուող ուսուցիչները առանց գիտնալ ուղելու միւս ուսուցիչներու մանկան գլխի մէջ խոթածները իրենք եւս նոյն գլխի մէջ այս կամ այն ծանօթութիւնը մտցնելով կը զբաղին : Այսպիսի աններդաշնակ և անկարգ գործողութեան ենթարկուած ուղեղի վիճակը արդարև զարհուրելի է :

Ասոր համար, այսօր կան ուսուցումներ, բայց չկայ մէկ ուսուցում :

Առարկաները դասաբաշխող գիտութիւնք, որ Բաքոն չը գտաւ, այսօր գոյութիւն ունի : Ան գանուած է՝ երկրա-

գընդի և մարդկային ներկայ և անցեալ այլազան ընկերութիւններու աւելի կատարեալ և աւելի ճիշտ ծանօթութեան շնորհիւ :

Միայն մարդու և ընկերութիւններու գիտութիւնը կարող էր այնպիսի լայն շրջանակ մը յառաջ բերել, որ պարունակէր և միացնէր մարդկային ծանօթութիւններու ամբողջութիւնը :

Մարդկային ուսուցման կեդրոնը կրնայ միայն մարդն ըլլալ :

Հին դարերու մէջ փիլիսոփայութեան լոյսով լուսաւորւողը մարդն էր :

Միջին դարերու մէջ, աստուածաբանութեան լոյսով լուսաւորւողը մարդն էր :

Ապագային, մեթոտական և բազդատական տեսութեան լոյսով լուսաւորւողը դարձեալ մարդը պիտի ըլլայ՝ հիմք ընդունելով միջավայրի և աշխատանքի պայմանները, ներկայի համար աշխարհագրութիւնը, իսկ անցեալի համար պատմութիւնը : Բայց այս նպատակին հասնելու համար պէտք է Աշխարհագրութեան և Պատմութեան ուսուցումը այնպէս նորոգել, որ նա իր այլազան միջավայրերու և դարերու մէջ ընդգրկէ իրական և կենսունակ մարդը :

Ուսուցման այս եղանակը գտնուած է այսօր, և նոր Դպրոցը զայն աստիճանաբար պիտի յարմարցնէ մանուկներու մտքին :

Զանազան ծանօթութիւններու իրար հետ ունեցած կապը, և մարդու հետ ունեցած յարաբերութիւնները այն ատեն պարզօրէն պիտի տեսնուին :

Պիտի տեսնուին որ աշխարհագրական, բուսաբանական, և երկրաբանական երեւոյթները — որոնք կը կազմեն Միջավայրի տարրերը, կազդեն ուղղակիօրէն աշխատանքի այլա-

զան բնաւորութիւններու, և հետեւաբար ընկերային վիճակի վրայ, ըլլայ անցեալի, ըլլայ ներկայի մէջ:

Նոյնպէս պիտի տեսնուի որ այսպէս ստեղծուած ընկերային վիճակ մը, իր կարգին, կ'ազդէ մարդկային մտածման, փիլիսոփայութեան հին ու նոր գրականութեան վրայ, բացի ատկէ, զանոնք ուղղակի կը բարեշրջէ և կը բացատրէ: Փիլիսոփայութիւնն ու գրականութիւնը հասարակութեան արտայայտութիւններն են:

Պիտի տեսնուի որ բնագիտական և բնալուծական երեւոյթները — որոնց զաղանիքները վերջերս միայն մարդիկ կրցան թափանցել ոչ միայն երկրագնդի, այսինքն աշխարհագրական միջավայրի վրայ ազդելու և ձեւափոխելու համար են, այլ նաև մարդկային և հասարակական կեանքի պատմական պայմաններու համար:

Այս միջոցով կարելի կ'ըլլայ իմանալ վերոյիշեալ ձեւափոխութիւններու աստիճանը և բնաւորութիւնը ու անոնց՝ միւս ծանօթութիւններու յօրինուածքի վրայ ունեցած հակազդեցութիւնը: Այս համակարգութեան շնորհիւ, ուսուցումը աւելի պայծառ և դիւրամբունելի կը դառնայ, որը ստիպողական պահանջ մ'է:

••

Թուաբանութեան և Մաթեմատիկի դասաւանդութեան գալով, որոնց լատիներէնի կրճատման պատճառով բաւական շատ ատեն յատկացուած է, մանուկներուն շատ մատչելի մեթոտով պէտք է դասաւանդել: Այս մեթոտի L'Ecole de Bedalesի (նոր մեթոտով դպրոց մը) մէջ յաջողութեամբ դասաւանդութիւնը տեսնելէն ետքը կը գնահատուի:

Ահա թէ զաւակս ինչ կը գրէ ինձ. «Այս շարաթ մեթոտական դրութիւնը սովորեցանք, գիտութեան մէջ մեզ շատ օգտակար եղող բնալուծութեան ուսուցչի հետ: Նա

մեզ գործնական եղանակով կ'ուսուցանէ և ոչ թէ Ֆրանսական մեթոտով : Օրինակ , քառակուսի մէթրի համար , նա մեզ գծել տուաւ 10 սանթիմետր կողմեր ունեցող քառակուսի մը , յետոյ զայն բաժնել տուաւ քառակուսի սանթիմետրերու և ասկէ ետքը մեզ բացատրեց թէ ինչու համար հոն 100սանթիմէդր կայ :

Մտրանարդ մէթրերու համար ուսուցիչը կը բերէ մէկ սանթիմէթր կող ունեցող , փայտեայ , քանի մը հատ խորանարդներ և զանոնք որոշ ձևով կը շարէ . օրինակ , նա երեք սանթիմէթր կող ունեցող խորանարդ մը կը շինէ և մեզ հաշուել կուտայ : Այս ձևով , դասը ամեն մարդ կրնայ հասկնալ :

Թուաբանութեան դասը կոտորակներն է : Դասը բացատրելու համար գրատախտակի վրայ ուղիղ գիծ մը կը քաշուի , և քանի մը օրինակ , 5 հաւասար մասերու կը բաժնուի և անկէ կառնուի երեքը , ասկէ կելայ $\frac{3}{5}$ ք :

Չեմ պնդեր թէ այս մէթոտները շատ նոր են , բայց արդարև — հակառակ իր պարզութեան — յաճախ դպրոցներու մէջ կը գուշանան զայն գործադրել :

Մաթեմատիքական ուսուցման՝ միանգամայն գործնական և հետաքրքիր բնաւորութիւն տալու համար , այս դրպրոցի մէջ , աշակերտները դասաւանդուած թուաբանութեան գործադրութիւնը կ'ընեն : Օրինակ , ազարակի , պարտէզի , խաղերու , պաշտօնեաներու պաշարի , շիմիի աշխատանոցի , անդեղէնի , վառելիքի , և այլնի ծախսի հաշիւները կը բռնեն ու կը կարգաւորեն : Այս եղանակով թուերը կը կենդանանան : Տունի մը , հողի արուեստական և վաճառականական շահագործութեան մը կառավարութեանը կը վարժուին , մէկ խօսքով անոնք կը դառնան գործնական մարդիկ , անոնք իսկապէս ընկերային բնոյթ մը ձեռք կը բերեն :

Գարձեալ մեր դասացուցակին հետեւելով մենք կը հանգիպինք բնական Ֆիզիքական, և քիմիական գիտութիւններուն, որոնք մեր դպրոցներու մէջ անտեսուած են: Մենք ուրիշ ատեն հաստատած ենք որ երկրաբանութիւնը, բուսաբանութիւնը, կենդանաբանութիւնը, ֆիզիքն ու շիմիան իսկական իմաստով չուսուցուիր: Ով որ ալ ըլլայ այս գիտութիւններու ուսուցիչը, անհրաժեշտ է որ նա գործնական և տեսական ծանօթութիւն ունենայ այս բազմազան գիտութիւններու մասին:

Մեր գրականութեան ճիւղի շրջանաւարտները կատարելապէս անտեղեակ են երկրաբանութեան, բուսաբանութեան և կենդանաբանութեան: Ամենայայտնի բոյսերու հանդիպած ատեն, անոնց ցոյց տուած զարմանքը կատարելապէս ծիծաղելի է: Ֆիզիքի և շիմիի մասին ունեցած ըմբռնումը փիլիսոփայութեան քննութեան ատեն հապճեպով ձեռք բերած տարրական ծանօթութիւններէն կը բաղկանայ: Ուրեմն բնութեան բազմազան և շքեղ արտայայտութիւնները կատարելապէս կ'անգիտանան: Աշխարհը ինչպէս որ ստեղծուած է, այնպէս ծանօթ չէ անոնց: Իմ հաշուոյս, երբէք չը պիտի կրնամ ներել Ֆրանսիոյ իմ ուսուցիչներուն և կրթական մեծ գրուիւններուն, կրթութեանս մէջ այդ մեծ պակասը թողած ըլլալնուն համար: Մարդիկ պէտք է որ իրենց գործերու պատասխանատուութիւնը ստանձնեն:

Այս պակասը շատ ցաւալի է, ամենափոքր մանուկներն իսկ, երբ գործնականապէս և խելացիօրէն դաս կ'առնեն, արտակարգ օգուտներ կ'ունենան:

Բնական գիտութիւններու դասաւանդութիւնը, նոր թիփի դպրոցներու մէջ, մեկնակէտ ունի անմիջական դիտողութիւնը, իսկ վերջինս շատ դիւրին է այն պատճառաւ որ դպրոցները շինուած են գիւղերու մէջ, ուր մանուկները կրնան դիւրութեամբ հանքային, բաքական և կենդանական


13898

բազմաթիւ նմոշներ հաւաքել : Ասկէ զատ : կենդանիի մը ներքին օրգանիզմէն և կմախքէն առաջ, անոր կեանքը, սովորութիւնները, արտաքին մասերը, բոյսերու դասաբաշխութենէն առաջ՝ անոնց ձեւերը և կազմուածքը, — աստղերու և մոլորակներու օրէնքներէն և շարժումէն առաջ՝ անոնց անունները և գիրքերը կ'ուսուցուին : Գասացուցակի վրայ նշանակուած յեա-կէսօրեան դաշտային պտոյտները կը թոյլատրեն կատարելու վերոյիշեալ ուսումնասիրութիւնները, — հաւաքել բոյսեր և միջամներ զօրս ետքէն իրենք աչակերտներ խնամքով կը կարգաւորեն ու կը դասաւորեն : Այսպիսով գիտութիւնը կը դառնայ աւելի բնական, աւելի խելացի, աւելի եռանդուն : Նա մտքի մէջ աւելի գիւրութեամբ կը թափանցէ և խորապէս կը հաստատուի հոն : Դասերը, ոչ թէ մեր զուտ տեսական և գրքային մեթոտներու յաճախակի առաջ բերած անախորժութիւնը կը ստեղծէ, այլ մշտապէս ուսումնասիրելու տենչ մը, նոյնիսկ դպրոցը ձգելէն վերջը, այս տենչը անոր մէջ անգամ մը արթնացած կենդանի հետաքրքրութեան արդիւնքն է մրայն :

Գասաւանդութեան այս ձեւերը ուրիշ տեսակէտով ալ յարմար են մանուկներու, բացօդեայ պտոյտներ ընելով առողջ և օգտակար մարմնամարդ մըն ալ ըրած կ'ըլլան : Բայց մեր զաւակները չորս պատերու մէջ և վանական բէժիմի մը տակ կրթելը, որը ձերերու համար իսկ հակառողջապահական կը համարուի, բարբարոս և յիմար քայլ մըն է, որու դէմ հանրութեան զգուանքը պէտք է հրաւիրել :

Հիմա կարելի է հասկնալ թէ ինչու նոր դպրոցի ծրագիրը բնական, ֆիզիքի և շիմիի գիտութիւններուն շարաթը հինգ ժամ կուտայ առանց հաշուելու նոյն գիտութիւններուն յատկացուած յեա-կէսօրեայ այցելութիւններու և հետախուզութիւններու ժամերը :

Ինչ կը վերաբերի ինձի, չարունակելով հանդերձ հայրական նկատողութեանս, ես հրացած էի զաւկիս



այլազան գիտութիւններու մէջ ձեռք բերած յառաջդիմութեան, և ճշմարիտ ու արտակարգ նետաքրքրութեան վրայ:

Արձակուրդին, զաւակս նետը կը բերէր բոյսեր հաւաքելուն յատկացուած գործիքները — բոյսերու անտուկ, սոսպնեակ (կօսին՝ առարկաններ խոշորցնող ասպակի), սեղմիչ գործիք, սեղմուած թուղթ, փոխանկուկ բոյս, նաև փոխադրելու, հանելու գործիք եւն: Նա եռանդով կը վազէր դաշտերը, և Անգլիոյ մէջ հազուադիւրս բոյսերու անասկները կը հաւաքէր. նա կամ ինքնիրեն և կամ ծաղկացուցակներու միջոցաւ դանոնք կը սահմանէր. յետոյ կը սեղմէր և խնամքով կը դասաւորէր. միեւնոյն ատեն իւր փոքրիկ քրոջն ալ կը խրախուսէր դէպի այդ աշխատանքը, ուրկէ մեծ հաճոյք կը զգային:

Ասոր նետ միասին, նա շարք մը հազուադիւրս միջատներ ալ կը հաւաքէր, զորս իր ընկերները իրմէ խնդրած էին:

Այս 13 տարեկան փոքրիկ մանուկը ֆիզիքէն և շիմիէն այնպիսի գործնական ծանօթութիւններ ձեռք բերած էր զըպրօցի մէջ, որ մեր արուեստի և մանուֆաքթիւրայի երկրաչափ դաշտի բարեկամներէն մէկուն զարմանք և հիացում կը պատճառէր, Իրական և կենդանի կեանքի այս բազմաթիւ յայանութիւններու շնորհիւ, մարդ պարզօրէն ընդունակութիւններու ծաղկիլը կը տեսնար. իսկ մեր ներկայ ուսուցման եղանակը ոչ թէ ճամբայ կուտայ այդ ընդունակութիւններուն, այլ կը խեղդէ զանոնք:

Նս այս օրինակով պարզապէս ապացուցանել կուզեմ թէ այս տեսակի դասաւանդութիւնը ոչ միայն փոքրիկ երեխաները կը նետաքրքրէ, այլ և զանոնք կը խանդավառէ. իսկ զայն անտեսելը և կամ խղճալիօրէն մինչև տարուայ վերջը քննութիւններու նախօրեակին յետաձգելը խորին տգիտութիւն է: Մնաց միայն նկարչութիւնը, որուն աւելի մեծ

կարեւորութիւն կը տրուի նոր դպրոցներու, քան թէ մեր ներկայ դպրոցներու մէջ :

Այն, արդարեւ, անհրաժեշտ օժանդակը կը դառնայ այն գիտութիւններուն, որոնց մասին մենք խօսեցինք. օրինակ, մանուկները կըսկսին բնականէն բոյսեր և կենդանիներ նկարել և ֆիզիքի, շիմիի դասերու գործիքները պատկերով ներկայացնել :

ՁԵՌԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

Մեր թուած այլազան դասերը կ'աւանդուին առաւօտեան և շատ քիչ ալ կէսօրէն կտքը : Յետ կէսօրեայ մնացած բոլոր ժամերը յատկացուած են, դուրսը Գործնական աշխատանքներուն, խաղերուն և մարմնական կրթութեան, որոնք առաւօտեան տեսական դասերու բնական լրացուցիչներն են :

Արդարեւ, աշակերտները չը պէտք է միայն զբոսերէն բան սովորին, անկէ դուրս իմանալիք շատ հարցեր կան : Ուսուցումը միայն տեսական լինելու չէ, ան հաւասարապէս գործնական ալ ըլլալու է : Ուղիղ չէ մանուկը օրուան մեծ մասը փակուած պահել, զարգացման համար մարմնամարզի և բացօդի պէտք ունի :

Այս առթիւ Անգլիոյ նոր դպրոցներէն Ապթօշոլմ (Abbotsholme) իր ծրագրի մէջ կը գրէ. « Մեր նպատակն է զարգացնել մարմնական կրթութիւնը, արուեստի մասին ծանօթութիւնը և հետաքրքրութիւնը, նախաձեռնութեան հոգին, և կատարուած գործի մը գնահատութիւնը, ըլլայ իր ձեռքով շինուած, կամ իր կողմէ կառավարուած :

Մարմնական տկարութիւնը, կեանքի մէջ անյաջողու-

թեան մեծ պատճառներէն մէկն է : Նոյնիսկ մանուկները ,
ամեն օր , մարմնական վարժութիւններ , և ձեռական աշխա-
տանքներ բնելու են : Մտաւոր յոգնածութենէ և նստակեաց
կեանքէ յառաջ եկած դիւրագրգռութիւնը ոչնչացնելու հա-
մար՝ մեծ պէտք կայ մարմնական կրթութեան» :

Ատկէ զատ , մանուկները այս ֆիզիքական աշխատանք-
ներէն մեծ հաճոյք կը զգան , և շարք մը այլազան ծանօ-
թութիւններ ձեռք կը բերեն : Անոնց միտքը կարթննայ , կը
բացուի և կ'ընդարձակուի և աւելի ըմբռնող կը դառնայ :

Դասացուցակի ցոյց տուածի համաձայն Դորձնական
աշխատանքը երեք մեծ բաժիններէ կը բաղկանայ :

1. Փարսիզպանութիւն եւ երկրագործութիւն .— Ամէն
զարգացած մարդ պարտաւոր է գոնէ տարրական ծանօթու-
թիւն մ'ունենալ բուսական և ընտանեկան կենդանիներու
մասին : Թէ վերջը հողը իր սեփական միջոցներով շահագոր-
ծելու և թէ ուրիշի սեփականութեան վրայ կառավարիչ վի-
նելու պարագային , այս ծանօթութիւնները անհրաժեշտօրէն
պէտք են իրեն : Այս ծանօթութիւնները հաւասարապէս հար-
կաւոր են ազատ արհեստ ունեցողներու համար ալ , մեր
գրագէտները հողագործական կեանքի մասին տարրական ծա-
նօթութիւն անգամ չունին , ասիկա զօրեղապէս կը զգան
այն ատեն , երբ այդ նիւթի վրայ կը ստիպուին բան մը խօսիլ
կամ գրել :

Քաղաքական մարդիկ և պաշտօնեաները պարտաւոր
են , հողագործութեան մեծ շահի մասին զազափար մ'ունե-
նալ , որպէս զի — ինչպէս որ ըրած են — իրենց աններելի
տգիտութեամբը յաճախ չը վտանգեն զայն :

Քսաներեք հեքթար կալուածի մը մէջտեղը հաստա-
ուած Նոր դպրոցը , L'École des Rochesը , որ զանազանակերպ
մշակելու հողեր կը պարունակէ , մանուկներուն դէպի պար-
տիզպանական և հողամշակութական աշխատանքը մղելու

գովելի մտքով շինուած է : Աշակերտները գործնականը աղէկ
իմացող ուսուցչի մը կառավարութեան տակ կաշխատին :

2. Փայտեայ եւ երկաթեայ աշխատանքներ. — Այս աշ-
խատանքներուն նպատակը՝ աշակերտները ատաղձագործ կամ
երկաթագործ դարձնել չէ . այլ անոնց ձեռքի ճարպիկութիւն
ու ընդունակութիւնները զարգացնել , և ինչ դէպքի կամ
ինչ գործի մէջ ալ ըլլայ , այս սքանչելի գործիքի : Այսինքն
ձեռքի գործածութիւնը օգտակար դարձնելն է : Ասիկա ,
ի միջի այլոց , առողջարար և ամբասնդիչ մարզանք մըն է ,
որովհետեւ մարմնական ոյժի ծախսին կը կարօտի : Ատկէ
զատ , փայտի և երկաթի դիմադրութիւնը , նախաձեռնած
գործի մէջ մանուկներու համբերութեան և յարատեւութեան
ընդունակութիւնները կը զարգացնէ . վերջապէս այս երկու
նիւթերը — որոնք մարդու ամենասովորական պէտքերուն
համար գործածուած առարկաներն են , աշակերտներու ճա-
շակն ու ընդունակութիւնը մշակելու համար , բազմաթիւ
կերպարանքներու և յարմարացումներու մէջ կը մտնան :
L'École des Rochesի երկու կողմը՝ տախտակեայ ծածկոց մը
շինուած է , որու տակը փայտեայ աշխատանքները կը կա-
տարուին :

Գպրոցին մօտ ձուլարան մը կայ , ուր երկաթի աշխա-
տանքները կ'ըլլան . ասիկա կը կառավարուի մանուֆաք-
թուրայի և արհեստից ճարտարագէտի մը կողմանէ , որը մի-
եւնոյն ատեն մեքենագիտութիւն , ֆիզիք և շիմի կը դա-
սաւանդէ :

3. Գործարաններու եւ ազարակներու այցելութիւն ,
հանգերու , բոյսերու եւ կենդանիներու հաւաքածոներ , ան-
դաշափութիւն , յատկազօծի պատրաստութիւն եւն .

Ուսուցման այս մասը մեծ կարեւորութիւն ունի այն
տեսակէտով որ աշակերտը , իրական կեանքի դանազան երե-
ւոյթներու հետ , ուղղակի շփման մէջ կը դնէ :

L'Ecole des Rochesի դիրքը նոգագործութեան և ճարտարարուեստին յարմար ըլլալուն պատճառաւ, աշակերտները յատկապէս կը վարժեցնէ այդ շինման, Գիւղատնտեսական այցելութիւններու տեսակէտով դպրոցը շինուած է նորմանդիոյ և Պօսի սահմանին մօտ, որոնցմէ առաջինի մէջ անասնաբուծութիւնը իսկ երկրորդին մէջ արմատիքի մշակութիւնը ծաղկած է: Ասկէ զատ, հոս ու հոն ցրուած բազմաթիւ անտառները, անտառամշակութիւն սովորելու համար հիանալի միջոցներ կրնծայեն:

Ճարտարարուեստական այցելութիւններու տեսակէտով վերոյիշեալ բաժինը դարձեալ նպաստաւոր է: Հոսով ջուրերու մեծ մասի վրայ, դաշտին մէջ, գործարաններ շինուած են. որոնք երբեմն ջրաբաշխ մեքենաներով, երբեմն ալ շոգիով կը բանեցուն: Հետեւաբար, հոս մեքենագիտական տեսակէտով զանազան զննութիւններ կարելի է ընել, Թեւեթէն մէկը Վէրնէյ շրջապատող՝ Իթոն գետի վրայ, կարելի է հետեւեալ գործարաններուն հանդիպիլ՝ 75 ջորենի ջրազոյց, 4 փայտանատ գործարան, 2 երկաթի գործարան, 3 մանարան, 1 հանքի զտարան, 2 ասեղնագործարան, 3 շինութիւններու գործարան, 2 բամբակ մանող գործարան, 8 իւղոտ բուրդ մանող գործարան, 1 թուղթի գործարան, 1 ելեքտրակաշնութիւն արտադրող գործարան և ուրիշ շատ շատեր:

Սահմանափակ տարածութեան վրայ, բազմաթիւ գործարաններ պարունակող այս նոգամասը ուրեմն, աշակերտներուն շարք մը իրագիտական դասեր կրնայ տալ:

Այս գործարաններու այցելութիւնները մեթոտիկօրէն կազմակերպելով, աշակերտները կրնային հետեւիլ այն յաջորդական կերպարանափոխութիւններուն, որոնց կ'ենթարկուն հանքային, բուսական կամ կենդանական մարմինները:

Ասկէ զատ՝ մանուկներն աւելի հետաքրքրող, ուրիշ զարգացուցիչ, յարմար և անհրաժեշտ դասեր կրնան ըլլալ արդեօք: Այս միջոցով սովորած գաղափարները յիշողութիւնէն երբէք չպիտի սրբուն. անոնք արագօրէն պիտի յայտնագործեն այն ընդունակութիւնները, որոնք առանց ասոնց, աստիճանաբար պիտի անհետանային կամ խեղդուէին: Յե-

տոյ, այս դաշտային գրօսանքները կօգտագործուին նաև հանքեր, բոյսեր և կենդանիներ հաւաքելով . իւրաքանչիւր աշակերտի կազմած և կարգաւորած այս հաւաքածոները, ամենագործնական կերպով կը լրացնեն երկրաբանութեան, բուսաբանութեան և բնական պատմութեան դասերը :

Դեանի վրայ փորձած անդաշտիական և յատկագրիծ պատրաստելու աշխատանքները կը կազմեն հաւասարապէս թուարանութեան երկրաչափութեան և նկարչութեան լրացուցիչները : Այդ դասերը՝ փորձերու միջոցով, յիշողութեան մէջ աւելի խորը կը տպաւորուին և անոր օգուտները աշակերտութեան կողմանէ ազէկ կը գնահատուին :

Յետ-կէսօրեայ մնացած ժամերը պիտի յատկացուին մարմնամարզութիւններուն, մասնաւորապէս ձմեռը «Ֆութպօլ»ներուն, ամառը «քրիքէթ» և «թընիսաներուն» . իսկ հեծանիւր և նաւակի մրցումները ամեն եղանակին յատուկ են :

Դպրոցի մօտէն հոտոզ «իթոն» գետը, որու մասին վերը խօսեցինք, արդարև, թեթև բեռով նաւակ մը առանց վտանգի, մօտաւորապէս 10 քիլօմէթր, կարելի է նաւարկել : Բազուկները և կուրծքը զարգացնող մակոյկի մրցումները, կուգան յաջողապէս լրացնելու սրունքի մարզանքներու ազդեցութիւնները : Դպրոցի փոքրիկ նաւախումբը որուն հաճելիի շափ ալ օգտակար է :

Լատիներէնի ձունձրալի և անհասկնալի դասի փոխարէն վերոյիշեալ ուսուցման պէսպիսութիւնը պիտի կարողանայ մտքի բոլոր կարողութիւններուն թռիչք տալ . իսկ մարմնամարզութեան ալլազանութիւնը պիտի կարողանայ զարգացնել մարմնի բոլոր մասերը :

Ազէկ հասկըցուած դաստիարակութիւն մը չպէտք է անտեսէ ոչ մարմին և ոչ ալ միտքը, որովհետև այս երկու տարրերը մարդու մէջ անբաժան են, իսկ մարդը անոնց երկուսին ալ հաւասարապէս տէր ըլլալու է : Ոչ հոգին մարմ-

նոյն և ոչ ալ մարմինը չողիին զսնելու է, այլ երկուքի մէջ՝ ննար եղածին չտի, ճիշտ և աղէկ հաւասարակչութիւն մը հաստատելու է :

Գորոցը՝ թէ մաքի և թէ զարգացմանը, միասնաբար չոգ տանելու է :

Առաւօտեան ժամերը ամբողջովին դասերուն իսկ յեակէսօրեան ալ մեծ մասամբ գործնական աշխատանքներուն յատկացուած ըլլալով, մեզ կը մնայ ցոյց տալ երեկոյեան գրադումները :

Ասոնք, դասացուցակի համաձայն, Գեղարուեստական գրադումներուն և Ընկերային հանդիպումներուն վերապահուած են, որոնք ընկերային մարդը «կեանքի մարդը» կը պատրաստեն և զանոնք մեր քոլէճներու տխուր ու ձախող ազդեցութենէն կ'ազատին :

Ես դարձեալ, «ապօթսնօլմ» դպրոցի ծրագրէն բնորոշիչ էջ մը պիտի մէջ բերեմ. «մեր նպատակն է մատաղ սերունդը անշնորժութենէ և երկչտութենէ զերծ պահել, և ընկերութեան մէջ տարիքոտ մարդոցմէ իսկ հաճոյք զգալու զազափար տալ : Այս պատճառով, անոնք ամեն երեկոյ սալոն կը համախմբուին, ուր կը հանդիպէ՞ր դպրոցի կիներուն և մեզ այցելող օտարականներուն : Երեկոյթի վայրը այնպէս կը շտկուի որ հաճոյքի և ներդաշնակութեան տպաւորութիւն արթնցնէ : Առարկաները, նկարները, և արձանները այս նպատակին համաձայն ընտրուած են :»

Միւս երեկոնները ընտիր կտորներու ընթերցման, որ և է բուն պատմելուն, թատրոնի, ներկայացման, տախտակի վրայ արձանագործութիւն ընելուն, կազապարներ հանելուն, պարերուն, և պրօժէքսիոնով դասախօսութիւններ տալու կը յատկացուին :

Կիրակի իրիկունները բարոյական և կրօնական քօնֆէրանսներու կը վերապահուին : Աղէկ գիտնալու է որ, կրօնը

կեանքի մէջ մեծ տեղ կը զբաւէ և կեանքը կրօնով յագենալու է . մենք կրօնը շենք ներկայացնենք մանկան . որպէս կեանքի մէկ մասը , այլ օրդանական և ներդաշնակ ամբողջութիւն մը . որը պէտք է ամբողջովին թափանցէ անհատի մէջ և զեկազարէ անոր ամբողջ գործերը : (1)

Փորձենք ուրեմն ներկայացնել դպրոցի երրորդ , այսինքն ընդհանուր կրթութիւն տուող մասի վերջին դասարանի աշակերտ մը , — նա կանոնաւորապէս գիտէ երեք լեզու : Ֆրանսերէն , անգլիերէն և գերմաներէն :

Նա աշխարհագրութեան և պատմութեան աւելի շատ ատեն յատկացուցած է քան մեր ներկայ քօլէճներու մէջ . նա հետեւած է մեթոտի մը , որ երեւոյթներու կապը գեղեցկօրէն կը ցուցադրէ :

Բնական գիտութիւններուն , բնագիտութեան և բնալուծութեան գալով զորս մեր քօլէճի ծրագիրը փիլիսոփայութեան դասարանէն առաջ կանտեսէ մեր ներկայացուցած աշակերտը անոնց մասին շատ ընդարձակ և գործնական ծանօթութիւններ ունի :

Նա , ի միջի այլոց , ծանօթութիւն ունի պարտիզպանութեան և գիւղատնտեսութեան , փայտեայ , երկաթեայ աշխատանքներու մասին : Զանազան մարզանքներու և բացօթեայ զրօսանքներու շնորհիւ , նա աւելի կրթուած մարմին ունի . վերջապէս , երեկոյեան հանդէսներու շնորհիւ , նա արուեստի , երաժշտութեան և ընկերականութեան ազատ հոգի ունի :

Այս բազմազան դաստիարակութեան ազդեցութեան տակ , 12—13 տարեկան մանուկի թաքնուած ընդունակութիւնները կարողացած են այս կամ այն կերպով արտայայտուիլ . որով անոր մէջ արթնցած են մտաւոր բոլոր հետա-

(1) Մենք հեղինակի այս մտքերու մասին արդէն կարծիք ունինք : Ա. Կ.

քրքրութիւնները : Նա , Լատիներէն կամ Յունարէն բնագրի դժուար ու բթացնող թարգմանութեան տակ խեղդուած չէ . ընդհակառակն , գիտութեան և կեանքի ճամբաներու վրայ , անոր համար պատուհաններ բացուած են , որով թէ ինքը և թէ իր ծնողները այս այլազան ճամբաներու վախճանները աղէկ քննելով , մէկն ու մէկը կրնան ընտրել 10

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

Նոր թիփի դպրոցները , մինչև երրորդ դասարանը ընդհանուր , իսկ չորրորդէն մինչև վերջին , այսինքն վեցերորդ(1) դասարանը մասնագիտական կրթութիւն կուտայ , Չորս մասնագիտական ճիւղեր կան , Ա—Գրական , Բ—Գիտական , Գ—Դիւղատնտեսական և Գաղթագործական , Դ—Ճարտարարուեստական ու Վաճառականական :

Իւրաքանչիւր աշակերտ մինչև չորրորդ դասարանը լուրջ կրթութիւն մը առնելէն ետքը թէ իր և թէ ծնողի ընտրութեամբ որ և է ճիւղը կ'ընդգրկէ : Բայց հոս ուշադրութեան արժանի կէտ մը կայ : Այս բաժանումները թող կարծել չը տան թէ աշակերտները չորրորդ դասարանէն ետքը կը թողուն ընդհանուր կրթութիւնը և կը մտնան մասնագիտականին մէջ , որով կրթութիւնը թերի կը մնայ . եթէ Պ . Տէժօլէնի բերած գոտացուցակը աղէկ քննելու բլլաք պիտի տեսնաք որ մասնագիտականի մէջ գեռ կը շարունակուի դարգացման վերաբերող ընդհանուր առարկաները : Հոս համալսարանական մասնագիտութիւնը չէ որ կուսուցուի , այլ դպրոցը

(1) Նոր դպրոցները մերինի նման եօթնամեայ չեն այլ վեց :

աւարտելէն ետքը եթէ ուզենայ կրնայ ուղղակի գործի մարդ դառնալ, ուզենայ կրնայ համալսարան շարունակել :

Իւրաքանչիւր ճիւղ, պահելով նախկին դասերը աւելի ոյժ կուտայ այն առարկաներուն, որոնք աշակերտի ընտրած ճիւղը այս կամ այն կերպով կը լուսարանեն ու կը զօրացնեն :

Մեր երկրորդական դպրոցներն ալ կրնան այս ծրագիրներով առաջնորդուիլ միայն որոշ էական փոփոխութիւն պէտք է որ ըլլայ :

Մեր երկրորդական դպրոցները մինչև չորրորդ դասարան՝ յատկացուելու են քնդհանուր զարգացման, պայմանաւոր չանտեսուիւն Տէմօլէնի ցոյց տուած ծրագրի ձևաարուեստն ու խաղերը . Ծրգ էն Դրգ կ'սկսի մասնագիտական մասը : Մեր մասնագիտական ճիւղերը բոլորովին տարբեր պէտք է ըլլան Անդլիականէն, որը իրենց պէսքերուն վրայ հիմնուած է :

Երկրորդական դպրոցներու մէջ պէտք չկայ գրական և գիտական մասերուն, որովհետև արդէն ամբողջ դպրոցի ընթացքին պիտի զբաղի ատով, իսկ զատ մասնագիտութիւն ընել ուղղը ուրիշ դպրոց կրնայ երթալ, ես նակառակ չեմ ճիւղերու մասնագիտացումին, սակայն իմ յետոյ առաջարկածներս աւելի կարելու են : Գաղթագործական, ճարտարարուեստական մասերն ալ պէտք չեն, մեր երկիրը դեռ չունի ատոնց զօրեղ պահանջը :

Որոնք պիտի ըլլան ուրեմն մեր երկրորդականներու մասնագիտական ճիւղերը : Հիմնուած մեր ժողովրդի և երկրի պահանջի և պէտքի վրայ, այսպէս կ'ընդունիմ . Ա—Գիւղատնտեսական, Բ—Արհեստական, Գ—Վաճառականական, Դ—Ուսուցչական :

Տաճկաստանը երկրագործական և մանր արհեստի ու մանր վաճառականութեան երկիր է . քեւ մեք այդ դպրոցներով չենք կրնար մրցիլ խոշոր հողատիրութեան, հարսա-

բարութեանի եւ վաճառականութեան դէմ, թայց անտեսական
մնականոն ընթացքի ճամբան դիւրացնելու համար, որը մենք
անխուսափելիօրէն կը ստանձնենք և ոչ թէ ցանկութեամբ,
կարելոր է գիւղական և քաղաքային արդիւնարեւական մի-
ջոցները գործիքի վերածել:

Արդիւնարեւական նահապետական միջոցները բոլորովին
անպէտք են ճիշտ այնպէս, ինչպէս դպրոցական հին մեթոտը:
Գոյութեան կուռի մէջ զինուելու է արտադրական նոր զէն-
քերով: Բայց մեզ կրնան առարկել թէ թոյլ գիւղացիներն
ու արհեստաւորները կը ճգմուին կուռի մէջ: Դժբաղդարար
ներկայ դրամատիրական կարգերու մէջ սնեստապէս ուժեղն
է որ «իրաւունք» ունի ապրելու, ապրիլ ուզողը, տեսնալով
անտեսական կեանքի այդ անխիղճ օրէնքը, կանգնելու և
ողբալու չէ. այլ զայն դիմադրուելու համար անտեսական
նոր զէնքերի է դիմելու:

Ահա այդ գեղեցիկ մասկարաւման միջոցն ու գործա-
ծութեան եղանակն է որ կը սովբեցնեն իմ առաջարկած նոր
դպրոցները:

Ինչ կը վերաբերի ուսուցչական մասին, աշակերտներէն
ուսուցիչ դարձողները երկրորդական մասը աւարտելէն ետքը
մէկ ամիս ալ «ուսուցչանոց» ճիւղին հետեւելու են. հոն,
անոնք մասնագիտօրէն կը վարժուին ուսուցչութեան և մեր
առաջարկած գործնական դպրոցէն հրաշալի ուսուցիչներ կը
հասնին:

Գրականութեան եւ գիտութեան նիւղերը այս մասին
մեզ որոշ կարելորութիւն կ'ըսանան:

Ուսուցչանոցի ուսանողները շատ բան կրնան ընել:
Անոնք իրենց ուսուցիչներու հետ նախ կ'ըսկան ուսումնասի-
րել գտնուած վայրի շրջակայ դպրոցները, հաւաքել ժողո-
վրդական երգերը, խաղերը, սովորութիւնները, հէքեաթ-
ները, պատմական արձանագրութիւնները:

Անոնք դարձեալ իրենց ուսուցիչներուն հետ կուտան ժողովուրդին օգտակար ներկայացումներ, պրօֆէքսիօնով առողջապահական, մանկավարժական, ընկերային դասախօսութիւններ, ընտանեկան այցելութիւններ ուր կը արուին մանկավարժական խրատներ եւն :

Ուսուցչանոցներու կարեւոր դերը ուսուցիչ պատրաստելու մէջն է, արդարեւ ո՞ր ուսուցիչն է որ կրնայ օգտակար դառնալ և իրագործել մեր վերոյիշեալ ծրագիրները. — ան ուսուցիչը երբ՝

Ա. Աւանդած նիւթը տիրապետած և իւրացուցած է .

Բ. Երբ առակերտին հոգեկան աշխարհը լիովին ուսումնասիրած է, այսինքն նա կատարելապէս տեղեակ է իր դէմը նստած սաներու ներքին աշխարհին, իւրաքանչիւրի առանձնայատուկ բնաւորութեան, և կարողութիւններուն :

Գ. Երբ դասաւանդութեան նոր եւ աղէկ մեթոտ մը ունի : Այս ամենազլխաւորն է . շատ ուսուցիչներ շատ և լաւ բան գիտեն, սակայն դասաւանդելու մեթոտ բնաւ չունին . այդ ուսուցիչներուն դասը անօգուտ է և ձանձրալի . մեթոտոյովին հիմա մանկավարժութեան մէջ ամենամեծ տեղը կը գրաւէ, յատուկ ընթացքներ կան միայն մեթոտի մասին :

Դ. Երբ բարոյական ազդեցութեան տէր է . այս ալ խիստ կարեւոր պահանջ է . աշակերտը կատարեալ հաւատք և վրաստնութիւն պէտք է ունենայ ուսուցչի հեղինակութեան մասին . հակառակ պարագային ուսուցչի ամէն խօսքը կեղծիք կը թուի աշակերտին :

Ե. Երբ նա գործնականապէս կրնայ թէ դասական, թէ գիւղատնտեսական և թէ արհեստական և այլ աշխատանքներուն անձնապէս մասնակցիլ :

Այս հինգ յատկութիւնները չիւրացնող անձ մը պէտք չէ ձեռք առնէ դաստիարակութեան գործը, հակառակ պարագային անիկա բարոյական մեծ պատասխանատուութեան առջև կը դանուի, և ընկերային ոճիր մը կը գործէ :

Միայն ուսուցչանոցներուն մէջ է որ կրնայ մասնագիտօրէն մշակուիլ դասաւանդութեան նիւթը, մանկան հոգին, դասաւանդութեան մեթոտը, ուսուցչին բարոյական դիրքը և գործնական աշխատանքները, ինչպէս բժշկութիւնը ունի իր մասնագիտական հաստատութիւնները, այնպէս ալ ուսուցչութիւնը: Միայն այսպիսի դպրոցներէն շրջանաւարտներուն կարելի է վստահիլ դպրոցական գործը, ինչպէս հիւանդը բժիշկին:

Սակայն ասիկա միայն անբաւական է, պէտք է նաև Մանկավարժական դասընթացներ հաստատել: Այս դասերը կրնան տրուիլ շրջանային տեսուչներու ձեռքով ալ, որոնք խրաքանչիւր գաւառներու կրթական հաստատութեան վրայ անմիջական հսկողութիւն ընելէ զատ՝ պէտք է տեղական Ուսուցչական Միութեան միջոցով տարուան մէջ ամսական և ամառնային մանկավարժական դասընթացքներ կազմակերպեն: Պոլսոյ մէջ թէ՛ Ուսումն. Խորհուրդին և թէ՛ կրթական տեսչին միջոցով կարելի է մեծ գործ կատարել այդ ուղղութեամբ:

Իսկ արդէն գործի վրայ գանուող ուսուցիչներուն համար, կ'արժէ որ կեդր. Ուսումն. Խորհուրդը և Ուսուցչական միութիւնը մանկավարժական պարբերական մը հրատարակեն: Այս միջոցով թէ՛ անտեսական և թէ՛ գործնական հարցեր կրնան շօշափուիլ, ինչպէս Կովկասահայերու մէջ Նոր Դպրոց հանդէսը, կ'կատարէ այդ դերը: Այս ծրագիրը պէտք է իրագործել, եթէ կ'ուզենք որ ծր մը դպրոցները բարեկարգուին և մեր մանուկները լրջօրէն դասափարակուին: Հակառակ պարագային դարձեալ կը շարունակուի հազարաւոր տղայներու զուր տեղ վասնուիլը:

Մինչև հիմա այս մասին շատ անտարբեր գանուան ենք, գրեթէ այս ուղղութեամբ ոչինչ բրած ենք, մինչդեռ թարեւաւ

լաւագոյն ստիժներ ներկայացած են լաւ դաստիարակներ
պատրաստելու համար .

Ահա մեր ապագայ խելալ , բայց ըստ էութեան իսկական
դպրոցները , ես թուեցի անոնց նպատակի և միջոցներու գըլ-
խաւոր դները : Բայց բաւական չէ միայն ընդունիլ , խօսիլ ,
գրել , այլ պէտք է գործել . մինչև հիմա մենք խօսելու և
գրելու հանգամանքին մէջ կը գտնուէինք . իսկ ասկէ ետքն-
ալ գործելու : Իսկ թէ որքան պիտի կարողանանք մեր խօ-
սածները գործի վերածելու , այդ ես ալ չը գիտեմ :

❖ Գ Ե Ր Յ ❖

[504.]

A 13898

ՌՍՏՈՒՅՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐՈՒՆ ԵՄԱԹԱԿԱՆ ԹԱՊԼՈՆ ԸՍՏ ՆՈՐ ԴՊՐՈՅԻ ԾՐԱԳՐԻՆ

ԵՐԼԲ նախնական տարիները պարունակող
Ընդհ. բաժին

ԵՐԼԲ վերջին տարիները պարունակող
մասնագիտ. բաժին

Ա. ԱՆՍՈՒ	Ա. Դաս	Բ. Դաս	Գ. Դաս	Գրական 1. 2րդ Յրդ	Գիտական 1. 2րդ Յրդ	Գիտական և Գաղթյալ 1. 2րդ Յրդ	Ճշգրտար. Վանձուր. 1. 2րդ Յրդ
Քրտաներէն	3 ժամ	3 ժամ	3 ժամ	5 ժամ	2 ժամ	2 ժամ	2 ժամ
Անգլ. և Գերմ.	8 ժամ	8	6 . . .	2	2	2	4
Լատին, և Յուն.	10
Աշխարհագր.	2	2 ժամ	2 ժամ	2	1 ժամ	3 ժամ	3 ժամ
Պատմութիւն	2	2	2	2	1	1	1
Հայեր և ուսուց.	2	2	3	2	7	2	3
Երկրաբանութ.	. . .	1	1		1	1	
Բուսաբանութ.	1	1	1	1	1	1) 1 ժամ
Կենդանաբան.	1	1	1		1	1	
Բնագիտութիւն	1	1	1	1	2	1	2
Տարրաբանութ.	1	1	1		2	2	2
Գծագրութիւն	2	2	2	2	3	2	4
Գիւղատնտես. և Գաղթականակ.	7	2
Գիտութիւններ							
Տնտեսականութ.	1 ժամ	2	4

Բ. Գործնական աշխատանքներ
կէս օրէն ետքը

Գ. Գեղարուեստական պարապմունքներ
երեկոյեան

Պարտիզպան. և Գիւղատնտես.	6 ժամ	6 ժամ	ժամ	Բշ. — (Ընթերցում) մեծ մարդոց կենսագր.
—				Դշ. — Արտասանութիւն և ներկայացում
Փայտի և երկա- ծի աշխատանք	5	5 ժամ	6 ժամ	Դշ. — Փայտէ տրանսպորտութիւն, մտարյալ
—				Նշ. — Պար
Էզարագները և լորձար. ալցել.				Ուր. — Գոմեր, միւղիք և երգ
—				Նշ. — Դասախօսութիւն, մտական լուսար
անքեր, բոյսեր կենդ. ժողովել	4	4	4	Կիր. — Բարոյագիտ. և ընկ. կրթութիւն
—				
Կաշտափութիւն յատակագծի տարրեր				



